«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝Լիանա Սաֆարյան

Ուսումնական հաստատություն՝<<Արգավանդի միջն. դպրոց>> ՊՈԱԿ

Երևան

Բովանդակություն

1. Ներածություն. 2

2. Գրականության ակնարկ. 3

3. Առակների ուսուցման նոր մեթոդներ և հնարներ. 5

4. Հետազոտության ընթացքը. 8

5. Եզրակացություն. 17

6. Օգտագործված գրականության ցանկ. 18

Ներածություն

Երեխաների դաստիարակությունը բարդ, պատասխանատու, բայց միևնույն ժամանակ հետաքրքիր գործընթաց է, և նրա նրանշանակությունը չի կարելի չգնահատել, չի կարելի ինքնահոսի թողնել:

Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն է երեխաների ու երիտասարդության գիտակցության ու վարքի, նրանց աշխարհայացքի, արարքների, սովորույթների վրա: Եվ հենց դաստիարակությամբ էլ նշանակալի չափով պայմանավորվում են այն փոփոխությունները, որ կրում է մարդը ծնվելու պահից մինչև հասուն դառնալը:

Այս հարցն այսօր շատ լուրջ է, քանի որ ներկա սերունդն ավելի շատ տեղեկատվություն ունի, շուտ է զարգանում, ուստի հատուկ մոտեցում է պետք:

Երեխաների դաստիարակության գործում մեծ դեր է խաղում ոչ միայն ծնողը, այլև մանկապարտեզը, դպրոցը և այլ ուսումնական հաստատություններ: Ցանկացացած ուսուցիչ պետք է գիտակցված մոտեցում ցուցաբերի այդ գործընթացին, և եթե կարևորում ենք մեր վաղվա օրը, ապա այսօր ջանք ու եռանդ չպիտի խնայենք մատաղ սերնդի դաստիարակության գործում: Հիշենք Համո Սահյանի խոսքերը. <<Ճշմարիտ հողի վրա կեղծ սերմ չդնենք>>: Չէ՞որ երեխային սովորեցնողը և դաստիարակողը մենք ենք՝ մանկավարժներս:

Դպրոցը չի կարող լինել պարզապես երեխաների դասապրոցեսի կազմակերպման համակարգ: Կրթությունը պետք է երեխային իր կարողությունները բացահայտելու հնարավորություն տա և օգնի ձևավորվելու որպես անհատ, քանի որ մենք այսօր ապրում ենք մի աշխարհում, որին անհրաժեշտ են հումանիստական կրթական միջավայրում ձևավորված քաղաքացիներ:

Գրականության ակնարկ

Անհիշելի ժամանակներից հայ ժողովուրդն ստեղծել է գեղարվեստական խոսքի կատարյալ նմուշներ՝ հեքիաթներ, առասպելներ, առակներ, ասացվածքներ, որոնք էական նշանակություն են ունեցել երեխաների բարոյական դաստիարակության ասպարեզում: Պատահական չէ, որ դրանք արժանացել են Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի, Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի և այլ նշանավոր մտավորականների բարձր գնահատականին: Ղ. Աղայանը դրանք համարել է ոչ միայն հայեցի դաստիարակության, այլև երեխայի լեզվի մարզման և ազգային մտածողության կերտման միջոց:

Հայ մանկական գրականության մեջ առանձնահատուկ դեր ունեն առակները, որոնց միջոցով երեխաների մեջ դաստիարակվել են հայրենասիրություն, ազնվություն, աշխատասիրություն, ինչպես նաև ծուլությունը, չարությունը, շահամոլությունը և վախկոտությունը խարազանելու պատրաստակամություն:

Առակը բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ այլաբանության միջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արատները: Առակի հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, իրեր, լուսատուներ և այլն: Անտիկ շրջանում և միջնադարում առակները արձակ ժանրի ստեղծագործություններ էին, սակայն հետագայում դրանք սկսեցին հիմնականում գրվել չափածո: Առակի վերջում սովորաբար հեղինակը դրսևորում է իր հստակ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ առակի բարոյախոսությունն է:

Առակի վարպետներ են Եզովպոսը, Ֆեդրոսը, Ժան դը Լաֆոնտենը, Իվան Կռիլովը, հայ հեղինակներից՝ Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, Խնկո Ապերը: Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից:

Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը: Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն: Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը:

3

XI–XIII դարերում ձևավորվել է հայ ինքնուրույն առակագրությունը: Մեծ ժողովրդականություն են վայելել Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները: Վարդան Այգեկցու անունով պահպանվել են առակների ժողովածուներ, որոնցից ամենահայտնին «Աղվեսագիրքն» է : Հայ գրականության մեջ առակներ են գրել նաև Խաչատուր Աբովյանը, Ղազարոս Աղայանը, Ավետիք Իսահակյանը, Խնկո Ապերը, Հովհաննես Շիրազը, Մկրտիչ Կորյունը և ուրիշներ:Հայ գրավոր գրականության մեջ առակները թափանցել են միջնադարում. գիտնական, պետական գործիչ, մանկավարժ Գրիգոր Մագիստրոսն իր թղթերում օգտագործել է ամենատարբեր առակներ: Նա, ինչպես երևում է իր նամակներից մեկի մեջ, պատվիրում է դպրոցներում աշակերտներին սովորեցնել քերականության և ճարտասանության հետ նաև առասպելավարժություն, այսինքն՝ աշակերտներին գրել, անգիր անել և մեկնել տալ առակներ, որը շատ հարմար վարժություն է եղել ապագա մեկնաբաններ պատրաաստելու համար:

Կարևորը և գլխավորն այն է, որ 12-13-րդ դարերում և հետո ամեն տեղ առհասարակ սիրում էին առակներ ու զրույցներ: Ուստի առակների ժողովածուները դառնում էին հաճելի ընթերցանության գրքեր և զարգանում զանազան տիպերով և զանազան ծավալով: Փաստորեն առակը՝ որպես գրական տեսակ, ստեղծվեց, քանի որ մարդ արարածը սիրում է սովորել օրինակով. ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը: Այն դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ է և օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչև այսօր սիրված են ու շարունակվում են մնալ որպես գրական տեսակ:

Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն: Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա: Առակների առաջին հայտնի հեղինակը հույն Եզոպոսն է:

Առակներով հարուստ է նաև հին հնդկական գրականությունը: Արևելյան ժողովուրդների մեջ տարածված են եղել Խիկար Իմաստունի և Մոլլա Նասրեդինի առակները:

Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելներ, Երևան, 1958

Առակների ուսուցման նոր մեթոդներ և հնարներ

Անընդհատ մշակվել և մշակվում են առակները երեխաներին մատուցելու նոր մեթոդներ ու մեթոդական հնարներ, որոնց հիմնական խնդիրը առակի դաստիարակչական նշանակությունն ու այլաբանական միտքը երեխաների գիտակցությանը հասցնելն է:

Առակները ոչ թե սովորական այլաբանություններ են, այլ բանաստեղծական պատկերներ, փոքրիկ պատմվածքներ, դրամաներ: Եվ այս բնորոշումից պարզ երևում է, թե որը կարող է լինել դասավանդման ճիշտ ուղին, որպեսզի չխամրի դրանց գեղարվեստական արժեքը, չխաթարվի գեղագիտական ու դաստիարակչական ազդեցությունը:

Առակների միջոցով է, որ կրտսեր դպրոցականը ընկալում է մայրենի լեզվի բարձրարժեքությունը (<<Ճայը և սագը>> Մ. Գոշ), Աստծո ամենազորությունը (Հիսուսի առակները), միասնականության ուժը (<<Անտառն ու քամին>> Խ. Սևոյան) և այլն:

Այսպիսով, առակների դասավանդումը տարրական և միջին դասարաններից 5-րդ դասարանում երբեք չի կորցնում իր բուն նպատակը՝ դաստիարակել բարոյական բարձր արժեքային

համակարգ ունեցող սերունդ, երեխայի մոտ վերացնել վատ գծերն ու թերությունները, ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները:

Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը: Այդ իսկ պատճառով առակների ուսուցումը բավականին կարևոր էգիտելիք փոխանցելու տեսանկյունից:

Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Հետազոտության նպատակը՝

• Բացահայտել առակը որպես երեխայի դաստիարակության միջոց

• Ներկայացնել աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

• Ընկալել դրանց արդիականությունը մեր ժամանակներում

• Կկարողանան քննել , զննել, դատել և արտահայտել սեփական դիրքորոշումը

• Ակնկալում եմ , որ հետազոտության ավարտին կունենանք գոհացնող վերջնարդյունք

Հետազոտության խնդիրն է՝

• Հիմնավորել առակների դաստիարակչական նշանակությունը՝ որպես մանկավարժական մեթոդ, որը նպաստում է դպրոցականների դաստիարակչական կարողությունների զարգացմանը. հետազոտությունով հավաստել, որ աստվածաշնչյան առակները արդի դպրոցում արդյունավետ կիրառվող և դպրոցականների դաստիարակությանը նպաստող ժամանակակից մանկավարժական մեթոդներ են և սահմանել դրանց կիրառության արդյունավետ պայմանները:

Հետազոտության խնդիրներից բխող հարցը՝

Արդիական են, արդյո՞ք, աստվածաշնչյան առակներում արծարծվող թեմաները, և դրանք, որքանով կարող են նպաստել ներկա սերնդի դաստիարակության գործընթացին:

Հետազոտության ավարտին՝

• Կզարգացնեն ճանաչողական կարողություններ

• Համբերատար կլսեն ուրիշ կարծիքներ, կդրսևորեն հարգանք յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ

• Աստվածաշնչյան առակների հերոսների օրինակով կլցվեն բարությամբ և կցանկանան բարին գործել

• Կկարողանան ներկայացնել առակի բարոյախոսությունը և դաստիարակչական նշանակությունը

• Ճիշտ մեթոդներ կիրառելով կունենանք գոհացնող վերջնարդյունք և դաստիարակված սերունդ

Հետազոտության ընթացքը: Երբ խոսում ենք առակների և նրանց դաստիարակչական նշանակության մասին, չենք կարող չանդրադառնալ աստվածաշնչյան առակների դաստիարակող էությանը:

Դրանց դերն ու նշանակությունը եղել և մնում է ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը. ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ:

Ահա, թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը:

Աստվածաշնչյան առակները ներկա սերնդին կարող են սովորեցնել, որ.

- երեխաները պետք է հնազանդ լինեն իրենց ծնողներին և ուսուցիչներին,
- պետք է կարողանան իմաստունին տարբերակել հիմարների միջից,
- եթե ինչ-որ մեկին տվել է իր խոսքը, նա պիտի կատարի խոստումը,
- թե՛ տղամարդը, թե՛ կինը պետք է հավատարիմ լինեն իրենց ընտանիքներին,
- պիտի լինես ոչ թե եսասեր, այլ մարդասեր,
- վատ արարքները երբեք անպատիժ չեն մնում,
- սուտը և գողությունը միշտ բացահայտվում են,
- ընտանիքում պետք է տիրի սեր, ջերմություն, ազնվություն և այլն

Ահա այս կետերից պարզ է դառնում, որ աստվածաշնչյան առակները մեծ ազդեցություն կարող են գործել երեխայի արժեհամակարգի ձևավորման և դաստիարակության վրա:

Սովորողի համակողմանի զարգացման հիմքը արժեքային համակարգի ձևավորումն է՝ ազգային և համամարդկային արժեքների գիտակցումը: Մանկավարժական արժեբանության կիրառական տեսանկյունից այս դրույթը արտացոլվում է հանրակրթության կրթական չափորոշիչներում, ուսումնական ծրագրերում, ուսումնական պլաններում, դասագրքերում, դիդակտիկ և մեթոդական նյութերում:Դպրոցը, հանդիսանալով անձի կրթության , դաստիարակության, ճանաչողական և այլ բնույթի արժեքներ: Սովորողի հոգեմտավոր ներաշխարհը ձևավորվում է ազգային և համամարդկային արժեքների գիտակցության ներքո, իսկ այդ արժեքներն ընկած են մարդասիրական կրթության հիմքում: Սովորողի ճանաչողական աչժեքները ձևավորվում են գիտելիքի միջոցով . մտորել- գնահատել – իմաստավորել- յուրացնել ճանաչողական արժևորման տրամաբանական քայլերը սկսվում են գիտելիքի փոխանցմամբ: Հետևաբար, գիտելիքը համարվում է առաջնային արժեք կրթական արժևորման աստիճանակարգում: Անձի կրթվածություն ասելով՝ հասկանում ենք ոչ միայն գիտելիքների համակարգի տիրապետում, այլև ստեղծագործական ունակությունների դրսևորում, համագործակցային, ինքնաարտահայտման որակների առկայություն, արժեքայի գիտակցություն:

Սովորողի արժեքային կողմնորոշման, արժեքային գիտակցության, արժեքային վարքագծի ձևավորումը սկսվում է դեռևս տարրական դպրոցից և կրում շարունակական բնույթ: Երեխան դեռևս տարրական դպրոցից բացահայտում է գեղեցիկը, արդարը, սերը և նման համամարդկային արժեքներ, որոնք արմատավորվում են անհատի հոգևոր աշխարհում:

Միջնակարգ կրթության բովանդակային բաղադրիչները որոշակիացվում են ՝ ըստ ուսումնական բնագավառների ու հանրակրթական դպրոցի աստիճանների՝ հաշվի առնելով սովորողների զարգացման ֆիզիոլոգիական, հոգեբանական և ազգային առանձնահատկությունները :

[3] Ա. Դոլուխանյան, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 59

		ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ
	Գիտելիք և հմտություններ	Գործողություն վերաբերմունք վարք
ԳԻՏԵԼԻՔ Առարկայական գիտելիքներ	Ճանաչողական մեթոդներ Վերլուծում,մասնավորում, համադրում,վերացարկում, անդրադարձում, մակածում / ինդուկցիա/, արտածում / դեդուկցիա/,ընդհանրացում , կանխատեսում	Ձևավորում են անձ և քաղաքացի հետևյալ որակներով՝ ✓ հայրենասեր ✓ ազգասեր ✓ աշխատասեր ✓ բարոյական ✓ ազնիվ ✓ արդարամիտ ✓ ընկերասեր ✓ ծնողասեր ✓ մարդասեր ✓ հանդուրժող ✓ քաղաքակիրթ ✓ բարեկիրթ և այլն

Անձ – քաղաքացու ձևավորման համար վերոնշյալ որակները համամարդկային են և տարիքային սահմանափակում չեն ճանաչում: Ըստ դիդակտիկայի փոխհաջորդելիության սկզբունքի՝ ուսուցման եռաստիճան համակարգում՝ տարրական, միջին և ավագ դպրոցներում, ենթադրվում է անընդմիջելի կապ՝ գիտելիքների և դրանց միջոցով արժեհամակարգի ձևավորման առումով: Միջին դպրոցում մի ստվար բաժին հատկացված է առակներին: Առակները ծնունդ են առել կենդանական հեքիաթներից և այլաբանորեն են ներկայացնում իրական կյանքն ու մարդկանց. Դրանք սովորողի արժեքային համակարգի ձևավորման համար անփոխարինելի միջոց են: Փոխհաջորդելիության սկզբունքի համաձայն՝առակների այլաբանական սկզբունքի բացահայտումն է դառնում այն սկզբնահիմքը, որի վրա էլ կառուցվում է ավագ դպրոցի ,,Ոճաբանություն ,, դասընթացում ընդգրկված պատկերավորման միջոցներից այլաբանության / դարձույթ/ ուսումնասիրումը:

Ուսումնագործընթացի կազմակերպման ձևերից մեկն էլ կրկնության դասն է, որը հնարավորություն է տալիս համակողմանիորեն դիտարկելու լայն թեման , մեր ուսումնասիրության դեպքում՝ արժեհամակարգի տեսանկյունից: Թեմայի ընձեռած հնարավորության սահմաններում մտորելու, գնահատելու, իմաստավորելու, յուրացնելու, արժևորելու տրամաբանական քայլերը հանգեցնում են արժեքային գիտակցության: Այսօր դասագրքում առաջարկվող տարաբնույթ առակների մեջ կան աստվածաշնչյան առակներ, որոնց դաստիարակչական արժեքը դժվար է գերագնահատել:Այս գիտակցությամբ էլ նպատակահարմար ենք գտնում ներկայացնելու դաս – գիտափորձ՝ առակների ուսուցման շրջանակում՝ կարևորելով ընկերասիրությունը որպես սոցիալական արժեքի տարր:Կրկնության դասը կարելի է կազմակերպել նաև բաց դասի ձևով՝ տեսասահիկային ներկայացմամբ այս դեպքում կունենանք այլ քայլաշարային եղանակ:

Դաս –գիտափորձի համար ընտրել են 5- րդ դասարանը, համակազմը՝ 16 աշակերտ, սեռը՝ 9 տղա և 7 աղջիկ, մակարդակը՝ գերազանց՝4 աշ., լավ՝ 6 աշ., միջին՝ 6 աշակերտ:

ՔԱՅԼ 1

<<Նախնական կազմակերպիչ>> մեթոդի միջոցով կազմակերպվում է ճեպահարցում ընկերասիրության վերաբերյալ. սահմանվում է որոշակի ժամանակ:

Բլից-հարցեր՝

- Ո”վ է քո ընկերը, ինչու” է հենց նա քո ընկերը.
- Քանի՞ ընկեր ունես.
- Ի՞նչ կանես ընկերոջդ համար.
- Ինչպե՞ս ես ընտրում ընկերոջդ/ ա. քո ցանկությամբ, բ. ծնողների միջամտությամբ, գ. ուսուցչի կողմնորոշումով/.
- Ո՞ր հատկանիշն ես կարևորում ընկերոջդ մեջ: Նախնական արդյունքները՝

Նախնական պատկեր՝/ ստորև ներկայացնում ենք նմուշօրինակ՝ մեկ աշակերտի կողմից արված. սեռը՝ արական, ուսման մակարդակը՝ միջին/:

Ո՞վ է քո ընկերը, ինչու՞ է հենց նա քո ընկերը	Քանի՞ ընկեր ունես	Ի՞նչ կանես ընկերոջդ համար	Ինչպե՞ս ես ընտրում ընկերոջդ	Ո՞ր հատկանիշն ես կարևորում ընկերոջդ մեջ
Իմ ընկերները Նարեկն ու Արամն են: Նարեկը լավ է սովորում.	երկու	Երբեք չեմ դավաճանի, ինչ-որ խնդրեն ինձանից, կտամ:	Սովորում է մեր դասարանում, ապրում է մեր բակում:	Ուժեղ է, լավ է սովորում, ինձ պաշտպանում է, օգնում է դպրոցում:

Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները մեծ հետաքրքրությամբ են կարդում առակներ. առակներում հանդես եկող կենդանիների, բույսերի, տարբեր առարկաների ու բնության երևույթների միջոցով ակնարկվում են մարդիկ՝ իրենց դրական ու բացասական գծերով:

Աստվածաշնչյան և առհասարակ առակների միջոցով սովորողը նոր որակներ է ձեռք բերում . նա արդարացիորեն դիտարկում և վերլուծում է մարդկային տարբեր բնավորություններ, քննադատում բացասականը՝ չարությունը, ծուլությունը, ագահությունը, ժլատությունը և այլն:

Անձի դրական հատկանիշների գնահատումը, արժևորումը բացահայտվում է այն բարոյախոսությամբ , որ փոխանցվում է առակի միջոցով: Ի լրումն այս ամենի

՝հոգևոր , բարոյական որակների ձեռքբերման առումով էլ ավելի ուժ ունեն Հիսուսի առակները, որոնք իրական կյանքից վերցված պատմություններ են: Դրանք Հիսուսի կողմից ավանդված բարոյականության յուրահատուկ դասեր են: Բարոյական, հոգևոր արժեքների փոխանցման յուրահատուկ աղբյուր է <<Մանկական աստվածաշունչը>>:

Հիսուս առակներով խոսում է երեխայի հոգու հետ՝բարերարության, լույսի, մարդասիրության դասեր տալով:

Կրկնության դասը հնարավորություն է տալիս ուսուցչին ՝անդրադառնալու Հիսուսի առակներին և դրանց միջոցով սովորողների մոտ ձևավորելու նոր արժեքներ:

Հիսուսը այնպես էր սովորեցնում, որ նրանց համար հեշտ լիներ հիշել: Սովորաբար տպավորիչ օրինակը կամ առակը չի մոռացվում: ինչպես Հիսուսն ինքն ասաց, առակները օգնում էին զատորոշելու նրանց, ում «սիրտը կարծրացել էր» ճշմարտության հանդեպ: Իսկ ինչպե՞ս էին նրա առակները բացահայտում մարդկանց մղումները: Որոշ դեպքերում նա միտումնավոր կերպով էր առակներով խոսում, որ մղի իր ունկնդիրներին հարցեր տալու դրանց լիարժեք նշանակությունը հասկանալու համար: Խոնարհ մարդիկ այդպես էլ անում էին, իսկ հպարտ կամ անտարբեր մարդիկ՝ ոչ: Փաստորեն, առակների միջոցով ճշմարտությունը հայտնի էր դառնում նրանց, ում սիրտը ծարավ էր ճշմարտության, սակայն թաքնված էր մնում նրանցից, ում սիրտը հպարտ էր: Հիսուսի առակներն ու օրինակները շատ առումներով էին օգտակար: Դրանք հետաքրքրություն էին առաջացնում մարդկանց մեջ՝ մղելով նրանց լսելու: Նաև պատկերներ էին ստեղծում մտքում, ինչի շնորհիվ հեշտ էր լինում հասկանալ:

Հիսուսի արծարծած թեմաները հիմա էլ արդիական են, քանի որ ներկա սերունդը ևս ունի հասկանալու խնդիր և ուսուցիչը ամեն ինչ պետք է գործի դնի երեխաների հասկացվածության մակարդակը բարձրացնելու համար: Ուսուցիչը պետք է Հիսուս Քրիստոսի օրինակով բացահայտի երեխաներին անհանգստացնող կամ խանգարող խնդիրները և տա դրանց լուծումները: Այստեղ առաջանում է հարց. Ինչպե՞ս Հիսուսի առակները բերել դասարան: Հարցի պատասխանը հետևյալն է. 5-րդ դասարանում երեխաները <<Մայրենի>> առարկայի շրջանակներում ուսումնասիրում են տարբեր առակներ, այդ թվում նաև Հիսուսի առակներից:

Կրկնության կամ ամփոփման դասերի ժամանակ ուսուցիչը դասարանը կբաժանի երեք խմբի և

ամեն խմբին կհանձնարարի աստվածաշնչյան մի առակ. 1-ին խումբ՝ <<Սերմնացանի առակը>>, 2-րդ խումբ՝ <<Որոմի առակը>> և 3-րդ խումբ՝ <<Անիրավ տնտեսի առակը>>: Երեխաները կկարդան առակները և յուրաքանչյուր խումբ կներկայացնի իրեն հանձնարարված տարբերակը կներկայացնեն առակների բարոյական և դաստիարակչական նշանակությունները:

Առակների ուսումնասիրության ընթացքում ուսուցիչը պետք է բարեխղճորեն լսի և պատասխանի երեխաների բոլոր հարցերին, որպեսզի աշխատանքը տա իր արդյունքը:

1-ին խումբ՝ <<Սերմնացանի առակը>>: Աղյուսակի միջոցով կներկայացնեն առակների բարոյական և դաստիարակչական նշանակությունները:

1. Բարոյական արժանիքներ	2. Դաստիարակչական նշանակություն
Աստծո խոսքը ճշմարիտ ու հոգևոր կյանքի սկիզբն է: Այդ խոսքը լսելով՝ մարդը դառնում է արդարամիտ, բարեգութ, ազնիվ:	Առակը դաստիարակում է, որ պետք չէ լինել անտարբեր, թեթևամիտ, դանդաղկոտ, պետք չէ հողի նման կարծր միտք ունենալ, հեռու վանել կասկածամտությունն ու բորբոքվածությունը:

2-րդ խումբ՝ <<Որոմի առակը>>: Առակը կներկայացնեն հետևյալ հարցադրումների միջոցով.

1. Ո՞ւմ են նմանեցվում ցորենի սերմերը:

- ◉ Բարի մարդկանց
- ○ Հիսուսի աշակերտներին
- ○ Հիսուսի հետևորդներին

2. Ինչո՞ւ չար մարդիկ միանգամից չեն պատժվում:

- ○ Յուրաքանչյուրին ժամանակ է տրվում զղջալու և ուղղվելու համար:
- ○ Բարի մարդիկ իրենց արարքներով քավում են չար մարդկանց մեղքերը:
- ◉ Չար մարդկանց կողքին ավելի նկատելի և գնահատելի են լինում բարի մարդիկ

3-րդ խումբ՝ <<Անիրավ տնտեսի առակը>>: Ներկայացնել արձակ շարադրանքի տեսքով.

Աշխարհի որդիները» նրանք են, ովքեր ճարպիկ են ու խորամանկ և բոլոր գործերում իրենց շահն են փնտրում: Իսկ «լույսի որդիները» նրանք են, ովքեր Աստծուն սիրելով և հանդերձյալ կյանքի ձգտելով՝ չեն հոգում երկրավորի մասին, այլ միայն հոգևոր հարստությունն են արժեվորում: Սակայն առաջինները նույնպես կարող են փրկվե վերջինների նման, եթե իրենց անօրինությունը գիտակցեն ու ղզջան, եթե իրենց հանցանքները ընդունեն ու խոստովանեն, եթե ապաշխարեն ու փորձեն իրենց մեղքերը քավել՝ ներելով և ողորմություն անելով, քանզի «աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն»:

Արդ, աղքատներից բարեկամներ ձեռք բերենք՝ նրանց համար ծառայեցնելով անցողիկ հարստությունը, որպեսզի, երբ տեղափոխվենք այս աշխարհից, նրանք մեզ ընդունեն իրենց հավիտենական բնակարաններում:

Իմ կարծիքով նման ձևով կառուցված դասը արդյունավետ է և հաջողված, որովհետև թե՛ աշակերտը, թե՛ ուսուցիչը հստակ գիտեն անելիքը. ով ինչ է անում, ինչ արդյունք է ակնկալում, ինչպես է անում, որ հասնի ցանկալի արդյունքի:

Աշակերտների տպավորություններից.

- Ինձ դուր է գալիս խմբով աշխատելը:
- Հետաքրքիր է:
- Աստվածաշնչյան առակները հետաքրքիր են և Աստծո շնչով լցված
- Սովորաբար չաշխատողն անգամ հասցնում է ինչ-որ բան սովորել, հասկանալ:
- Մեզ ավելի ինքնավստահ ենք զգում:
- Հիսուսի առակները կարդալով մեր քրիստոնեական հավատքն ավելի է խորանում:

Փաստորեն առակը՝ որպես գրական տեսակ, ստեղծվեց, քանի որ մարդ արարածը սիրում է սովորել օրինակով. ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը: Այն դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ է և օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչև այսօր սիրված են ու շարունակվում են մնալ որպես գրական տեսակ:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ աստվածաշնչյան առակների ուսուցումը շատ կարևոր է դպրոցականների համար, քանի որ դրանց դաստիարակչական նշանակությունները բազմակողմանի են և համընդհանուր:

Մեր օրերում երեխաների հետաքրքրությունների շրջանակը այլ է. գնում է դեպի համակարգիչ և համացանց՝ հետ մղելով հոգևորն ու արժեքավորը:

Հետազոտությունը ցույց տվեց, որ աստվածաշնչյան առակները երբեք չեն կորցնում իրենց արդիական և համամարդկային նշանակությունը: Դրանցով ուսուցիչը ներթափանցում է սովորողի հոգեկան ներաշխարհ և բացահայտում այնտեղ առկա վայրիվերումներն ու անհանգստությունները:

Ինչպես Հիսուսն էր առակների միջոցով բացատրում, վեր հանում երկրի վրա ճիշտ ապրելու և երկնային թագավորության արժանանալու գաղտնիքները, այնպես էլ ուսուցիչը կարող է երեխային դաստիարակել աստվածաշնչյան առակների բարոյախոսությամբ:

Այսքանով հանդերձ՝ կանենք հետևյալ եզրակացությունը. 5-րդ դասարանում ամփոփման դասերին Հիսուսի առակների ուսումնասիրությունը ունի շատ խորը դաստիարակչական նշանակություն և դրանցից յուրաքանչյուրում արծարծված թեմաները շատ արդիական և համահունչ են մեր օրերին:

<<Սերմնացանի>>, <<Որոմների>>, <<Անիրավ տնտեսի>> և այլ առակներում Հիսուսը ցույց է տալիս տվյալ ժամանակաշրջանին բնորոշ չարիքները, որոնց կատարողը մարդն է: Այս առակները բերելով մեր օրեր՝ սովորողները տեսնում են, որ բոլոր ժամանակներում էլ չարությունը, դաժանությունը, սուտը, շողոքորթությունը, վախկոտությունը, տգիտությունը, ագահությունը եղել են պարսավելի, իսկ բարությունը, ազնվությունը, հոգատարությունը, համեստությունը՝ դրվատելի:

Ուստի պետք է ասել, որ աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը եկել է դարերի խորքից, կրթել է բազում ժողովուրդներ և այդ գործընթացը դեռևս շարունակվում է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աստվածաշունչ (Նոր աշխարհ հրատարակություն, 1984թվական):
2. Մանուկների Աստվածաշունչ (Աստվածաշնչի թարգմանության ինստիտուտ, 1985):
3. Ա. Դոլուխյան, <<Հայ գրականության դասավանդման մեթոդիկա>>, Երևան, 2006:
4. Լ. Թորգոմյան <<Մանկավարժության արժեբանության հիմունքներ>> Երևան, 2011:
5. Մ. Աբեղյան <<Հայ ժողովրդական առասպելներ>>, Երևան, 1958: